

Այս բառիս մեկնութիւնն իբր «միակտուր ժայռ» (Հ. Եփր. 2ադրճեան, Բռն.) նոյնչափ հաւանական է, որչափ պարզ «քարայր» (Առձեռն): Խորե-նացւոյ խօսքն է (Գ, Խե)՝ «Առաջի դրան այրին սեպ էր ուղղորդ թափաղաղ, եւ ի վերուստ պաղանջա-րաւոր, որ հայի յանդուհն խորածորոյն»: Պատ-կերը կրնայ այն բնաւ թէ մինչեւ քարայրին բե-րանը միակտուր սեպ ժայռ մըն էր, իսկ քարայրին վրան քուածեւ կախուած կամ դուրս ցցուած միա-կտուր քոփ մը: Բառս կարելի է մեկնել գիտական լե-զուի համար (ըստ Մ) իբր Kalksinter մը¹: Վեր-ջապէս պէտք է մոռնալ որ ունինք արդի այլեւայլ բարբառներու մէջ գործածուած բառ մը, այն է՝ «Պալ», որ կը նշանակէ «քարաժայռ, քարափ, մեծ քար»² (ւ կրնար՝ գաւառական տարբերութեամբ՝ բնաւ = լ, հմմտ. ալոր եւ աղաղ, ալի եւ աղ եւն): Զիարդ եւ իցէ՝ թողլով այս բանասիրա-կան խնդիրները, մենք կը համարձակինք առաջար-կել՝ ոչ միայն թափաղաղաւ, այլ նոյն իսկ պարզ պաղաղաւ, պաղաղաւ առնուլ concrétionի հան-քաբանական եւ երկրախօսական իմաստով, եւ կար-ծենք թէ պաղաղ կրնար առնուիլ խնամքանական մտօք ալ (փխ. անդոյ «տղիղ»)։ պաղաղ = con-créétionner եւն։ Գոնէ ապագայ բանասէրք յար-մարագոյն բառեր գտնելու են՝ եթէ անընդունելի երեւայ մեր ընտրութիւնը։

(Շարունակելի:)

Հ. Յ. ՏԱՇԵԱՆ



¹ Մ (Էջ 56—57) «Պաղանձաւ» (Kalksinter) կը կոչէ այն շիւքարայրին կազմութիւնը, որ քարայրներու «յատակն ու պատերը՝ ձեան սպիտակութեամբ, դեղնագոյն կամ մոխրագոյն կեղեւի պէս, հազարաւոր՝ ցոլացող բե-րեղներով կը պատէ»: Մառոյցի կտորի նման առաստաղէ վար կախուած կազմութիւններ այժմ կը կոչենք Շթաթ (stalactite), յատակէն վեր սիննածեւ բարձրացողները՝ Պոթաթ (stalagmite): — ՀԲ կը մեկնէր իբր «սառն իբրեւ անձաւ», բայց նաեւ «ըստ նմանութեան առկախեալ սառին»:

² Հմմտ. Ամբաստանի, Էջ 546. — Իսկ Ամբաստան, 890 կրկին իմաստ կու տայ. «տեղէն չարժուող խոշոր տպառաժ քար, աւելի մեծ քան թէ փարը՝ որ շարժելի է: Պալ Պալ քարեր: 2. լայն եւ դուրս ցցուած. Պալ Պալ» (վերջինս միակ գաւառական մը համեմատ): Իսկ Ղրպ. պալ, բայց ուրիշ գուռ. պալ, պալ (գլխակապէ շրջանակ եւն, տես անդ). թերեւս կապ ունենայ պալ արմատին հետ (հմմտ. հին երէ-նապալ, գրուած նաեւ երկապալալ եւն): Այս եւ շարք մ'ուրիշ բառերուն մասին տես Ամատունի եւ մանաւանդ Աճառեան՝ նոյն տեղերը:

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԺՈՐՈԹԻ ԱԻԱԶԱՆԸ

(Աշխարհագրական եւ պատմական հետազոտու-թիւններ:)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Առաջին անգամ դեռ հինդ տարին չը-րացրած, 1864 թ. Մայիսին ինձ տարին Կարսից Արդանուշ: Տախտը-Շահվանում (դեսպակ) նստած էի մօրս եւ փոքր քրոջս հետ, որը կապուած էր երկու ձիու մէջ, մինն առաջեւից էր դնում, միւսը ետեւից եւ մենք այդ արեւելեան դեսպակի մէջ նստած կատարեցինք 200 կիլոմետր ճանապարհոր-դութիւնը երեք օրուան ընթացքում: Պէտք է յայտնեմ, որ այդ ժամանակ Կարսից-Արդա-նուշ ո'չ թէ խճուղի, այլ սայլի ճանապարհ էլ չկար. միայն կարավանի ուղի կար, որից անցնում էին ձիերի կամ ջորիների շարքերը մէկ — մէկ — իրար ետեւից: Եթէ լեռնալան-ջից որեւէ ձի կամ ջորի սայթաքէր, կարող էր գլորւել իր բռնով մինչեւ ձորի անդուն-դը, զորին այլեւս փրկութիւն չէր կարող հասնել: Տախարակներում թէ հովիտներում շատ տեղ բնական լայն ճանապարհներ կային, որտեղից անվտանգ անցնում էինք. պէտք էր զգուշանալ միայն անդունդների բարձր լանջերում փորւած կամ մաշւած նեղ նեղ կածաններից անցնելիս:

Այդ ժամանակ ստանձին կամ քչորով չէր կարելի ճանապարհորդել. Աջարայի եւ Լիվանայի լագերը շարունակ կողոպտում էին անդէն ժողովրդին: Ուստի մեզ առաջ-նորդում էին մեր արեւնակից Եօթը դինւած կտրիճներ, որոց ղեկավարում էր մեր կըն-քահայրը՝ Թէլի-Ակոն: Դեսպակի լուսա-մուտից անկերջ դնում էի չորս բոլորս նը-կատւած տեսարանները. իսկ մայրս անընդ-հատ պատասխանում էր հարցերիս: Մայրս լաւ ծանօթ էր ճանապարհին, եւ տգէտ կին չէր: Կէսօրին իջանք Այդը (Յովտակ-Պէգաս) լճակի ափին ճաշելու եւ ձիերին կեր տալու: Լճակի վճիտ ջրերի մէջ լողում էին անթիւ կոճեր (ձուկ), որոնք իրենց ցատկոտոցով ինձ գրաւել էին: Ես հար-ցրի կնքահօրս թէ՝ — ինչի՞ ես Յովտակ անւանել լճակը:

— Լճի յատակում Յովտակներ են ա-պրում, պատասխանեց ժպտալով:

— Դու տեսե՞լ ես այդ Յովտակներին, ու՞ր են դրանք, ես չեմ տեսնում:

— Դրանք միայն քաջերին են երեւում, որոց տանում են ամպերի վրայով, ուր որ կամենում են գնալ: Ամէն մարդու աչքի չեն բնկնիլ:

Փոքր հասակից վարժ էի ձի նստելու: Այս Յովտակի առասպելը այնքան խոր տպաւորութիւն ունեցաւ ինձ վերայ, որ ապագայում շարունակ թախանձում էի ծնողներից ինձ համար մի Յովտակ ձեռք բերել: Ինն տարի յետոյ Կ. Պոլիս Դպրոց գնալիս՝ անցանք միեւնոյն ճանապարհով. հին տպաւորութիւնս ամբողջապէս վերանորոգեց. նորից լճակի ջրերը զննեցի, բայց բացի կոճերից ուրիշ կենդանի չտեսայ:

Այդ լճակից անցանք մի քանի հովիտ, ձոր ու տափարակ. հասանք Կոլայի Թէմիր-Կափու գիւղը: Ճանապարհին մեր աջ կողմը կանգնած էր հսկայատես Դրսըր-Ստերջ լեռը, որի լանջերի վրայ արածում էին բազմաթիւ ջուկեր, հօտեր եւ նախիրներ: Ես գիտէի, որ ձին ու կովը կարող էին ստերջ մնալ. բայց լեռան ստերջ լինելը ինձ անբացատրելի մնաց: Առաւօտ անցանք Կոլայի ճահիճները, ծաղկաւէտ մարմանդները. հանդստացանք Գերմուջէքի անտառում եւ ապա նոյն իրիկունը արեւով մտանք Շաղեւան գիւղը: Անմիջապէս եղբորս հետ գնացինք Շաղեւանի աւերակ տաճարն այցելելու, որի դմբէթն իջած էր. բայց սրբատաշ եւ քանդակաւոր որմերը, մանաւանդ ներքին պանդանտիւններից դուրս ցցւած Եզի, Առիւծի, Արծիւի եւ Մարդու կիսարձանները այնքան հրապուրեցին աչքերս, որ չէի ուզում հեռանալ աւերակից: Կոլայի հիւսիսարեւմտեան մասում, Շաղեւան, Մանիսք, Ախաչն, Սիւնդիցղոմ (Ծինդիցղոմ), Ակահա, Դիկաչն եւ Արդանեակ գիւղերում դեռ կանգուն կամարակապ այս եօթն տաճարներն (Էզի-քիլիսէ), բերդերը, ամրոցները եւ դղեակների աւերակները թումբերը, այն էլ հինդ-տասը կիլոմետր տարածութեան մէջ, այնքան հետաքրքրական էին, որ մինչեւ քնելը խօսակցութեան նիւթը այդ պատմական յիշատակարանների շուրջն էր: Կընքահայրս բացատրեց, թէ ամբողջ Կոլայում, Ութիում, Կիսկիմում եւ Արդանուչում հայեր էին ապրում. ապա Լալա (Մուսթաֆա) փաշան երեք հարիւր տարի առաջ դորանց կոտորել է. միայն իսլամը դաւանողները ա-

զատել են 1578 թ. կոտորածից: Դեռ մինչեւ այսօր ձորովի աւազանի բոլոր գիւղերում հայհոյում են Լալա-փաշային, իր կատարած այդ անգութ կոտորածի եւ կործանած տաճարների, բերդերի եւ դղեակների համար. ասաց կնքահայրս հառաչելով:

Առաւօտ վաղ Եասամալի լեռների ստորոտով բարձրացանք Եալաուզ-Չամ սարը եւ իջանք Կոլաչն գիւղը: Երբ մտանք անտառապատ եւ այգեստաններով տարածւած Կոլաչնի ձորը, անհուն հրճւանք դգացի չրջապատի բոյրից, դալարից, պտղալից ծառներից, դոյնղդոյն ծաղիկներից, որոնք ինձ արեցրին անուշարոյրով. այլեւ չկային Կարսի լերկ ապառաժները, դեղնած դաշտերը, սեւ հերկերն ու խողանները. ամէն ինչ զմրուխտի ցուր ունէր, ամէն քայլափոխին պէս-պէս տեսարաններ: Կոլաչնումն էլ կար դմբէթն իջած մի աւերակ տաճար, որի մասին ծերերն ասում էին, թէ Լալա փաշան ուռմբով է կործանել: Այլեւս համբերութիւնս հատած՝ ցանկանում էի ժամ առաջ Արդանուչ հասնել: Ինձ Կարսում պատմել էին, որ պապիս-պապը Պաշատուր Կարադեօղեանը Դաւիթ Բէգի խժեղութիւնների ժամանակ թողել էր Ղարաբաղը, գաղթել էր Կլարջէթի Սոլիան գիւղը 1725 թ. չէնցրել ու ապրել: Ապա երբ երկու մեծ որդիքը Արդանուչի գիւղերից երկու իսլամ աղջիկ էին փախցրել եւ ամբողջ դաւառի մոլլաների հալածանքին էին մատնւել, իսլամացել էին, հաստատւել Սոլիանում. պապիս-պապը հաւաքել էր մնացածներին, կին, աղջիկ ու տղայ, գնացել, հաստատւել էր Արդանուչում: Այստեղ եօթնամեայ տղային՝ Լեւոնին մկրտելիս, վերջինս տաշտից փախչում է արարողութեան ժամանակ, որով Արդանուչիցիները անւանել էին — Տաշտից փախչողենց տունը — (թէքնէդէն կաշան): Այս մտքերով ալէծուփ հասանք Մէյդան-Արդանուչի ստորոտում մեր ջաղացքը: Կեանքիս մէջ առաջին անգամ մեր թթնոցում թութ թափեցին, ժողովեցի ու կերայ: Ապա բարձրացանք սոսկալի գառիվերը, հասանք աւանի բեդենիս (պարիսպ) եւ բերդի երկաթէ դռնով ներս մտանք Արդանուչ:

Կարսի եւ Արդանուչի մեր տների դանաղանութիւնը խիստ նկատելի էր, չտեսածներս ինձ համար խիստ հետաքրքրական էին: Այստեղ տան բակում սարքած էր

խորափը, ուր մամս մի քանի հարսները հետ կտաւ էր դործում: Թոնդրափի մօտ յատուկ տեղում դրւած էր մեծ պղինձը, ութսուն դոյլանոց, որի մէջ այդ օրերը մամս սապոն (օճառ) եփեց. շարունակ երեք չորս օր զօր եւ զիշեր վառում էին պղինձի տակը-կրակարանը: Կալաքարը, կիրը, ամէն ինչ մամս պատրաստել էր նահապետական ձեւով, սապոնը պատրաստելուց յետոյ, ջարդեց եւ շարեցին տան կտուրի կաւառի տակը չորցնելու: Էլիկնարի այգին, ուր ամէն տեսակ պտուղներն հասել էին, շատ հաճելի դրօսալայր էր: Մամս յատուկ կարասները մէջ թուրը թթւեցնում, օղի էր քաշում ամէն ուրբաթ եւ շաբաթ օրերը: Վարձ-խատի դոմը, Սիւօլի եւ Սալի-գլխի արանը, Ունուխիւսի մարդը, Առաւելի պարահզը, Տանձոտի ծխախոտի տնկարանը, ԿլարՅէթի այգին, Գորդայի բաղը նորանոր եւ խիստ գրաւիչ տեսարաններ էին ինձ համար, որտեղերը շարունակ թափառում էինք ոտքով եւ հեռաւոր վայրերը ձիով: Բարեկամազգական, միայն մեր տոհմից-Խաչատուր Կարազեօգեանի սերնդից 70 տուն էինք կաղմում, ամէն մէկը հրաւէր էր սարքում, հաւաքոյթ էր անում եւ մեզ մեծրում էր:

Հօրեղբայրս ամէն առաւօտ արշալոյսին գնում էր Վարձխատի անտառը, տան վառելիքն էր բերում ջորիով: Զաղացքից ամէն շաբաթ մի պարկ ալիւր էր բերում ջրաղացպանը: Գեղերից ամէն օր կաթ, մածուն, պանիր, եղ, սեր, միրգ, ձուկ, որս էին բերում միւսլիման գիւղացիները եւ մամս սապոնով փոխում էր ու մեզ բաւականացնում: Միւսլիման գիւղացին օճառ եփել չգիտէր, նա կարիքը հոգալու համար, հում նիւթ էր բերում բերդը փոխանակելու, որից օգտւում էին արհեստաւորները: Շուտով միրգն ու բանջարը, սիւմիւրն ու վարունգը կորցրին իրենց հմայքը. աշունն էլ հասաւ եւ շիրան տուն կրեցին, սկսեցին մալէգ եփել, պաստեղ, քոմա պատրաստել եւ մաք շինել:

Այրն ու բենը տախտակի վերայ ինձ ճանաչացրեց ջորեպան Ունանենց տիրացու Պօղոսը: Մինչեւ ճաշ տախտակ էի կարդում եւ ճաշից յետոյ գնում էինք խաղալու այրերի գլխին գտնւած կիսակործան տաճարում: Շատ հետաքրքրում էին ինձ այրերի մասին տարածւած հեքիաթները. բայց մոռաք անչափ դժւար էր: Հետաքրքր էր վերի

բերդը, ուր գտնւում էին բազրատունիները կիսակործան ապարանքը, զօրանոցները, աւազանները. բայց շատ դժւար էր բարձրանալը, սանդուխդները փշրել-թափել էր Ահմէդ փաշան 1833 թ. որ այլեւս որ եւ է աստի մէջը չպատասխարէ: Սակայն 1873 թ. սանդուխդներ գրինք ու բարձրացանք կերանք այն ծառերի թղնքից ու նոնքից, որոնցից մի ժամանակ քաղել ու կերել էին Արդանուշի իշխանուհիները:

Բայց Արդանուշի ամենադժուրէն տեղը Մածալախէթի բարձունքն էր, դժոխային ժայռի, դժոխային ձորի աջ ափը որը աւելի քան 150 մետր բարձրութիւն ունի վտակի ափից եւ այս բարձրութեան ճիշտ մէջ տեղը կայ մի երկաթի դուռ, ուր անհնար է բարձրանալ ձորից: Կամ ցած իջնել ժայռի դադաթից: Այդ դռնից ներս գտնւած դղեակների, ներքին դանձերի, անմահ ողիների մասին տարածւած առասպելները շատ հետաքրքրութեամբ լսում էի. բայց ճար չկար այդ դռանը հասնելու:

Տասն եւ հինգ ամիս յետոյ երբ վերադարձանք Կարս, միտքս Արդանուշի այն եռուն կեանքից էր բաժանւում, ձգտում էի նորից գնալ: Կարսի չրջակայքի Կլ-Կայայի, Խարարա-Քիլիսայի, Բող-Կալայի աչքադարեան հսկայական որմերը, Զլավուդի, Աջի-Սուլի ջերմուկները, Թիքմալի տաճարը, Կարաչայի ղաշտը, Սողանլու լեռան թուրքմանների Զիարէթը (ուխտատեղ Զուխուրաք խո՞չէ), Կաղանլար աղբերակը, մատաղները, դավուլ-գոււնաով թուրքմանուհիների կլոր պարը իրենց գոյն-դգոյն տարադներով, սրանց ծաղիկ պարը, հողի մէջ եփած «չորան քերարը» (հովւական խորոված), ջեհեզով փլաւը, ձիաւորների ջիքիքի խաղը շատ դարձալի էին, բայց երբ Սողանլու անտառում կաղնին պտուղ չունէր, Պանտան տանձ չունէր, չէին կարող այնպէս գրաւել, ինչպէս հրապուրում էին ԿլարՅէթի չրջակայքը:

1873 թ. Մայիսին Տանձոտցի Ռստակենց Մկրի հետ գնացի Մերդենիկի եւ Կոճձորի ճանապարհով Փէնէգկերտ, Ոլթի եւ Թափուքար: Մկրը այս երկրի յայտնի Բաղադն էր (ձոթածախ) եւ բոլորից յարգւած չէին էր. 7 տարեկան հասակից մինչեւ 70 տարւան հասակը եւ մահը Մկրը կեանքը մաշել էր Փէնէգի շուրջը. նա ճանաչում էր անուն անուն ոչ միայն բոլոր

գիւղերը, ձորերը, առւակները, լճակները, ժայռերն ու անտառները, սրանց փայտի տեսակները, աղբիւրներն ու ակերը, այլ նա գիտէր ամէն մի գիւղի բնակութեան անհատներին, մեծի թէ փոքրի, արուի թէ էգի անունները: Մկրի հետ ման եկայ Տայոցքարի, Փէնէղկերտի, Բանայի, Ուրի, Իշխանի, Ալմուշնի, Դորդ-Բիւիսէի, Հարչիւշի, Անիի, Կարսի, Խախի, Օշկի, Օթխայի հնութիւնները: Այս երկիրը իր հնութիւններով, Մկրի պատմածները, աչքովս տեսածները, մանաւանդ իսլամացած ժողովրդի խոստովանութիւնները այնպիսի խոր տպւորութիւն թողին, որ ես անձնատուր եղայ այս երկիրը ուսումնասիրելու գաղափարին:

Իսլամ բնակչութիւնը ո՛չ միայն խոստովանում էր, թէ լալա փաշան նրանց պապերին բռնի իսլամացրել է, այլ ասում էին մոլլաներին եւ Օսմանեան վարչական փաշաներին, ակամայ գնում էին մզկիթ, ուր նրանց բռնութեամբ տանում էին, ծովը չէին պահում, լացում չէին կատարում, կրկնամոնոթիւնից խուսափում էին եւ հառաչանքով սպասում նոր յայտնութեան, յոյս ունէին ազատել չէրիաթի ճիրաններից: Առանին կեանքը գրեթէ հին հայկական էր, սովորութիւնները, հագուստը անփոփոխ, նամէհրամ չունէին իրար մէջ, ծածկում էին միայն մոլլաների եւ պաշտօնեաների ներկայութեանը. հալածանքի չմասնակցել համար: Այս դաւաճների բնիկներից եւ ո՛չ մի մոլլա կամ ոստիկան-պաշտօնեայ չկային. ուրիշ դաւաճներից էին գալիս սրանց կառավարելու: Ամէն մի ընտանիքի մականունը առհասկան-ժառանգական էր, — Մուխոնց Օսմանը, Տէրտէրանց Ալին, Քաւորանց Հուսէինը, Սանահորանց, Մահմէտը, Փահլեւանեց Դուրսունը եւ ուրիշները: Ասում էին մանաւանդ տոհմական իշխանաւորներին, որոնք պետական պաշտօններ ստանձնած՝ կեղեքում էին հողագործներին: 1879 թ. միեւնոյն բանը մեզ պատմեց Տէր-Անտոնը Կոլայի Հոգամ գիւղում. ուր բնիկները խոստովանեցին ճշմարտութիւնը, երբ Կ.Պոլսից տուն էի վերադառնում:

1873 թ. եւ 1879 թ. Կ.Պոլսի գնալիս եւ վերադարձիս Արդանուշ, Արդվին եւ սրանց շրջակայքը պտուելուց յետոյ, երբ Արդվինից նաւակով իջայ Բորչիա եւ Մարաղիդ, ինձ հետաքրքրեցին վերին Մարաղիդի հա-

րաւային եւ հիւսիսային կողմերը գտնւած կիսակործան դմբէթաւոր տաճարները, Փերթեւանի ամրոցը, Փէլեւանի բերդերն ու ակերակները. մանաւանդ Ճորժի վրայ քցւած միակամար հսկայական կամուրջները: Լեռների զազաթներին եւ լանջերին չինւած դղեակ-ամրոցները, վանքերն ու դմբէթաւոր տաճարներն տանեակ կիլոմետր հեռաւորութիւնից անցորդի աչքն էին գրաւում եւ ստիպում էին հարցեր տալու դրանց մասին անցորդներին կամ դիտեցողներին:

Կարսի նահանգը ցարական կառավարութիւնը գրաւելուց յետոյ, երբ նահանգի մոլի կղերի առաջնորդութեամբ Իսլամ ժողովրդի մեծագոյն մասը զազթեց Ալիս եւ Իրիս գետերի ափերը. Իսլամն ատոյները մնացին: 1880 թ. Ութի գիւղացիներն եկան ինդլի տւին Կարսի առաջնորդ Աղւանեան եպիսկոպոսին, որ իրենց մկրտեն եւ ընդունին Հայոց եկեղեցու գիրկը: Խնդրատուները իրենց հետ բերել էին պապէնաւանդ մազադաթի մաշտոցներ, չարականներ, աւետարաններ, սկիհ, մասնատուփ, մեռնի ամաններ եւ ասում էին — «Մեր պապերը մեզ աւանդ էին թողել, որ երբ լոյսը գայ մենք բերենք ձեզ յանձնենք այս աւանդները եւ ինդրենք, որ մեզ նորից ընդունէք ձեր մէջ, որտեղից հեռացրել էին բռնաւորները»: Խնդրադիրը Կաթուղիկոսին ներկայացրին, որը ներկայացրեց փոխարքային, որպէս զի թոյլատրեն ժողովրդի ցանկութիւնը իրականացնելու: 1883 թ. ինդիրը ետ եկաւ Կարս նահանգապետին, որի օգնական գլխապետ պետանդերը պարտաւորւած էր դեկոյց տալու պետական խորհրդին այդ ինդրի մասին: Որպէս պատմութեան ուսուցիչ ինձ հրաւիրեց պետանդերը տեղեկութիւններ տալու. պարտաւորւած էի Այվազովսկու՝ Օսմանեան պատմութիւնից եւ Չամչեանի էջերից՝ մի քանի երես թարգմանելու եւ յանձնելու: Ապա պետանդերի հետ գնացի Ութի գիւղերը այցելելու եւ գիւղացիների խոստովանութիւնները լսելու: Ես պարտաւորւած այդ ճանապարհորդութիւնը կատարելուց յետոյ, ուղեցի այնտեղ մնալ, ինձ կանչեցին Ութեցի տնտէրերը աւան, որպէս զի նրանց գնած տների եւ այգիների յատակադժերը պարտաստեմ եւ նոր շինուելիք բնակարանների եւ խանութների ուրաւականները ծրագրեմ: Այդ տեղ էր եւ Մկրը,

եկել էր առնելիքները հաւաքելու: Մկրի հետ նորից այցելեցի Տայոց քարի, Փանաղ-կերտի, Ութիի եւ Բարդուղի հնութիւնները ու վերադարձայ Կարս: Կիսկիմն ու Թորթումը դարձել էր մեզ համար արտասահման. չկարողացայ անցնել Օսմանեան այդ վիճակները. իսկ 1915 եւ 1916 ին որպէս «Թիֆլիզի Լիստոկի» եւ «Մշակի» թղթ-թակից Ութիից անցայ Նարիման, Իդ, Թորթում, Կիսկիմ, իջայ մինչեւ Արաթ եւ Թաֆթ մարտկոցները (Թաբրիս). որոնց մասին գրել եմ Армянскій Вестник հանդիսութ 1915—1916 թ.: Այս մասին տես նոյնպէս «Հայաստան» լրագիրը նոյն թւականներին, որը հրատարակում էր Թիֆլիզում Անդրա-նիկի ղեկավարութեամբ:

1880—1881 թ. Կարսի հայկական դը-պրոցում ուսուցիչ հրաւիրւելով ինձ յաճ-նեցին պատմութեան եւ աշխարհագրութեան դասերը, ինչպէս ընդհանուր, նոյնպէս եւ ազգային: Ես պարտաւորւած էի յատկա-պէս ուսումնասիրել այս առարկաները: Հայերէն, ռուսերէն եւ ֆրանսերէն ամա-դրերում ինչ որ պատահէր, հաւաքում էի, որպէս զի մի ընդհանուր ձեռնարկ կազմեմ այս առարկաների մասին եւ 40 տարի է, որ նիւթեր եմ հաւաքում: 1907 թ. Բաթում կառավարում էի «Կարոպց ընկեր». վաճա-ռատունը եւ պատրաստում էի Պարիս գնա-լու, որ Խրիմի պանտիկապեյից ձեռք բերածս հնութիւնները ծախեմ. (Տե՛ս Պա-րիսում 1908 թ. ֆրանսերէն լեզուով հրատա-րակւածս 2400 հնութիւնների կատալոգը): Միանգամայն ծրագրում էի Բաթումի կալ-ւածատէրերի համար նւազագոյն տոկոսով դրամ գտնել եւ Ռուսական աղնւականու-թեան բանկերի հարստահարութիւնից ա-զատել: 1882—1907 թ. Եւրոպացիները սկսել էին պեղել Բաթումի, Արդվինի չրջա-կայքի հանքերը եւ առատ փող էին ցրել այդ նահանգում: Ինձ ղրմեցին մի քանի հանքի տէր ձաներ, որ ես Եւրոպայում նրանց հանքերը շահագործողներ գտնեմ եւ հրաւիրեցին հանքերն այցելելու: Ես դնացի Մուլիսուր, տեսայ ծխախոտի տնկարանները, պղնձի հանքերը. ապա բարձրացայ Արդվին, Ծրիա, Խալխալ նաւակով եւ ուսումնասի-րեցի ինչպէս ձիթենու պարտէզները, նոյն-պէս Խոզի հանքերը: Ինձ առաջնորդում էին պալիսարեցի կալւածատէր ձաները, ո-րոնց պապերը դարերով շահագործել էին

իրենց պղնձի, արծաթի, ոսկու եւ երկաթի հանքերը: Խալխալի եւ Պալիսարի շուրջը 40 հանքատէրեր կան, որոնք տքնում էին ինձ համոզել իրենց հանքերի գերադանցու-թեան մասին, որպէս զի ես շահագործողներ-կապիտալիստներ գտնեմ եւ հանքերը մշա-կելու ձեռնարկեմ: Աւելի քան 50—60 հաւատարմագիր տւին ինձ, լիազօրեցին որպէս զի ես անարգել Եւրոպայում բանակ-ցեմ եւ շահագործողներին հրապուրեմ եւ դործի սկսեմ: Խալխալից ես հասայ մինչեւ Պալիսար, Բահլ եւ Բալհի, ղնեցի ինչպէս հանքերը, նոյնպէս եւ հնութիւնները, բեր-դերն ու դղեակները, վանքերն ու տաճար-ները, կուրգաններն ու դոմէնները, աչքա-դարեան պարիսպները, այդեստաններն ու ապարակները:

Յայտնի բան է Եւրոպայում կատա-րածս բանակցութիւնների հետեւանքը 1908 թ. անթուարար էր, քանի որ կապիտալիստ-ները չէին ղրջանում Կովկասում-ցարի իշ-խանութեան տակ վտանգել իրենց դրամա-գրուիւր, մանաւանդ սրանց միջնորդները տքնում էին առիւծի բաժինը իրենք կուլ տալ եւ ոսկորները թողնել կալւածատէրե-րին: Ժողովրդի օգնութեան չէի ձգտում, այլ կողոպտելու: Իմ փափագս էր մի փոքր դրամագրուի կազմել եւ ապա չրջել ձորոխի բոլոր դաւառները, լուսանկարել եւ ուսում-նասիրութեանս հետեւանքները հրատարա-կել: Բայց այսօր, այլեւս յուսահատ, զգում եմ, որ չարիտի կարողանամ վերստին այցե-լել այդ վայրերը, վերստուգել, լուսանկա-րել, յատակազօծերն ու հատւածականները պատրաստել, մի ամբողջական դործ տալ, պատկերազարդ. ուստի գրի առայ, ամ-փոփեցի յիշատակարաններին մնացորդները եւ յիշողութիւններս յանձնում եմ մամուլին:

1918—1920 տարիների խժդժութիւն-ների ժամանակ տունս հինգ անգամ խուզա-րւել եւ հաւաքածոյս ցրւել էին, 600 կոոր ղրտուկան գրքերիս հետ, այնպէս որ նորից եմ հաւաքել եւ ժողովել այս բոլորը:

Ես աշխատել եմ յատուկ անունները ժողովրդի-ազգաբնակչութեան արտասանած ձայներով արձանագրել. պէտք է յայտնեմ, որ Ութիի, մանաւանդ Թորդումի բնիկ հայերը ամէնից ճիշտ էին արտայայտում անունները: Ութիի Լեւոփէկ վիճակի, Լեւ-փէկ գիւղում, երբ ես մոլորւած կրկին ու կրկին հարց էի տալիս ձերուկին, որ ինձ

առաջնորդում էր, նա ասաց, «Լեսփէկ» է, այլ «Լուսփակ», չէ՞ս տեսնում — Լուսը փակւել, կապւել է, բարձր սարերը փակւել էին լուսի ճանապարհ: Կարսի նահանգական տարեցոյցը Լեսփէկ էր ցոյց տալիս, ես չէի կարող երեւակայել, որ պաշտօնէութիւնը գիտութեամբ կամ անփոյթ կերպով Լուսփակ-Լեսփէկ է շինել: Թէ Կովկասի զինուորական քարտէզի վերայ, ինչպէս 1872, նոյնպէս 1902 թ. տպւած է «Լեսփէկ»։ Southampton-ի մէջ 1919 ի. անգլիերէն տըպագրւած քարտէզի վրայ նոյնպէս Լեսփէկ է տպագրւած թէ լեռը, թէ գեղը եւ թէ պոստը. ուստի ես գրեցի Լոյստակ կամ Լուսփակ. այսպէս եւ բազմաթիւ անուններ: Բալխոռ եւ Բայրուրդ անձամբ չեմ եղել. բայց օգտւելով Ռուսակ. Կովկասի զինուորական շտաբի հրատարակած Пржевальский-ի եւ Коллюбакин-ի գործերից, որոնք ուսումնասիրել են ինչպէս լեռները, նոյնպէս եւ գետերն ու վտակները: Գործածւած բոլոր թւերը ես վերցրել եմ յիշատակների եւ կարտերի վերայից, կամ այլ ճանապարհորդների ուսումնասիրութիւններից: Տառերի ձայները Կովկասում գործածւած սովորականն է: Չեմ եղել նոյնպէս Թեւիս, Մաճիխեւ եւ Աջարա:

Ես չեմ կարող պնդել, որ մի ամփոփ գործ եմ տալիս պատմութեան եւ գրականութեան, քանի որ ես ինքս անձամբ նրա թերութիւնները նկատել եմ. բայց ես տալիս եմ ճանապարհորդական նկատողութիւններս, ժողովրդի կենդանի բարբառի արտասանութիւնը եւ նրանց տւած բացատրութիւններն ու աւանդութիւնները: Ես այդ բոլորը, համեմատելով մեր հին պատմագիրների թողած յիշատակարանների հետ, ենթադրութիւններս նոյնպէս տալիս եմ ծանօթութիւններով: Ես մի ճանապարհ, մի նեղ կաճան եմ բայց անում, յուսալով՝ որ ինձնից յետոյ գալողները կ'ընդարձակեն այդ անցքը, ուր երկաթուղի եւ աէրօպլան կը հաստատեն եւ իսկութիւնը կը յանձնեն գիտական աշխարհին: Թող ներեն ինձ, որ ես չտապում եմ այդ կատարելու, քանի որ համոզւած եմ, որ բարբարոս ձեռքերը, նեղ մտածողները եւ չովէնները գործում, ոչնչացնում են այդ մնացորդները, այլանդակում են, եւ Լալա փաշայի կիսակործան թողածները իսպառ անհետացնում են:

Կան բազմաթիւ թրքականացած յա-

տուկ անուններ, որ թուրքերէն քարտէզների վրայ Կ. Պոլիսի թուրք բարբառի եւ առողանութեամբ են տպագրւած. ես պարտաւորւած էի այդ անունները միշտ գրել եւ ուղղել բնիկ ժողովրդի արտասանութեամբ. օրինակ Կ. Պ. կարգում է «Բիլիսէ», ժողովրդը արտասանում է «Բիլիսա». Պ. «Բէյ». իսկ գաւառացին՝ «Բէկ». Պ. «Կչլակ». իսկ Գ. «Ղչլակ» եւն եւն: Կ. Պոլսեցին ծ. ձ. ց. ձայները չունի: Ոլթեցին շատ որոշ ասում է «Կոժձոր»: Փէնէկի հասարակութիւնը բնիկներից իսլամացածները պարզ «Դիճանց», «Մածանց» են արտասանում, որ կարիք չի լինում երկար մտածելու. այն ինչ Պ. արտասանում է «Տիզանց», եւ «Մեզանս»:

Ես տալիս եմ իմ ճանապարհորդական նկատողութիւններէս հետ 40 տարւան այլ եւ այլ եզրակացութիւններս, որ ունեցել եմ կարգաւորվ այլ եւ այլ գրւածքներ այս մասին եւ իրականի հետ համեմատութիւններ կատարելով: Ես աշխարհագրութիւնը տւել եմ Կովկասի զինուորական շտաբի քարտէզների եւ ուսումնասիրողների գործերի հիմունքով, իմ զիտողութիւններով եւ ուղղումներով: Մանաւանդ երբ նկատում էի, որ գիտական գործի մէջ քաղաքականութիւն էին բանացնում եւ ծովում էին, որպէս զի յատուկ անուններ օտարացնեն: Ես յոյս ունիմ, որ կ'ունենամ հետեւողներ եւ կիսատ թողածներս կը լրացնեն: Եթէ ես երիտասարդ լինէի եւ վստահ, որ պիտի հնարաւորութիւն գտնէի անձամբ վերստուգել, լուսանկարել, յատակագծեր ու համեմատականներ կազմել, ես չէի յանձնել այս գործս մամուլին մինչեւ այդ բոլորը կատարելը. բայց այժմ ես ծերացած, դրամից զուրկ եւ որ ամենագլխաւորն է հնարաւորութիւն չկայ Հայի համար մտնել ձՍ-ը եւ ուսումնասիրել: Ահա այս պատճառով մտանցոյց եմ անում ուրիշներին գծադրածս ուղին բռնել եւ առաջ գնալ: Մանաւանդ որ պեղումների համար մեծ գումար է հարկաւոր, այդ էլ կարող է կատարել որ եւ է Ակադեմիա, Համալսարան կամ թանգարան: Թող այս ուրազիծն առաջնորդէ նրանց գիտութեան զարգացման ծառայելու:

Ես տալիս եմ առանց քաշելու միայն ունեցածս, տեսածներս եւ լսածներս:

Անհրաւակա:

ԱՏՐՊԵՏ